

տոհմերու միաժամանակ ներգաղթին վարկածը (Aslan, Etudes Hist., 139) կուռն պիտի ըլլայ մեզի ապա պատմական կարեւոր երեւոյթ մը մեկնելու: Շատ բնական է, որ եկեւոր տոհմերը ամենաեռանդուն նեցուկները եղած ըլլան Տրդատ Բ-ի կամ Խոսրով Ա-ի ընդդէմ նորահաստատ ոսոխ գահին:

Կամսարականներու ծագման ու սկզբնաւորութեան մասին այսպէս կը մտածեն նաեւ նորագոյն պատմագիրներ: Գեւորդ Ասլան, անդ, 139 կը գրէ. «Տրդատ Բ-ի թագաւորութեան ժամանակ դնելու ինք Բակտրիայի — որ որոնքն էր նաեւ իր հարստութեան — շատ մը նշանաւոր ընտանիքներու գաղթը, որոնք Հայաստան եկան իրենց կեանքին սպառնացող հալածանքներէ ճողպրելու համար: Ասոնց մէջ էին Կամսարականները եւ Մամիկոնեանները, առաջինները արիւնակից արքայական ընտանիքին...: Տրդատ տուաւ անոնց հիւրընկալութիւն եւ հողեր այն առան, երբ հարստութեան փոփոխութիւն մը արեւելեան պետութեան ծոցին մէջ՝ եկաւ վտանգել նոյն իսկ Հայ գահին գոյութիւնը: Մեծագիր այս խօսքերէն եւ յաջորդ էջերէն կը հետեւի որ Ասլան՝ Կամսարականներու գաղթը, Պարթեւ Արշակունիներու կործանումէն յառաջ կ'ենթադրէ: Աւելի բնական է սակայն անոր հետ աղերսի մէջ դնել եւ անկէ առթուած համարիլ: Ասլանի ակնարկած հալածանքներու հեղինակն է Բարակ: Մէտ եմ զանոնք Արտաշէրի վերագրել, եւ այս պարագային իմաստ կը ստանայ Ասլանի յաջորդ վարկածը: Արտաշէրէ հալածուած տոհմերը կը խմբուին Արտաւանի շուրջ: Արտաւան կը պարտուի, կը սպաննուի (224) եւ ապա Կամսարականք ճարահատ անձնապործ կը փախչին Հայաստան:

Այլազգ չի խորհիր նաեւ Laurent, անդ, 69, 70, 96—97:

Անտոյդ կը մնայ միայն թէ Հայոց որ թագաւորին ժամանակ տեղի ունեցած է այն դէպքը: Ոմանք Ասլանի հետ Տրդատ Բ-ի թագաւորութիւնը կ'երկարաձգեն մինչեւ 251, մինչ այլք հայ աւանդութեան խոսքով Ա-ի կը վերագրեն նոյն ժամանակամիջոցը: Սակայն այդ երկրորդական է մեր հարցին համար: Իական է Պահլաւ Կամսարականներու գալուստը Հայաստան՝ Գ. դարու առաջին քառորդին՝ Պարթեւ Արշակունեաց կործանումէն ետք:

Հ. Մ. ԿՈՅՆԱՆ

## ՅԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

Անշուշտ ընթերցողներին յայտնի է, որ 20 տարի առաջ Մոսկուայի արդիւնագործներին Մուղանի դաշտը ուղարկած Զրաբաշի երկրաչափները գտան, պեղեցին եւ բացին այն ջրանցքները, որոնք տարածուած էին ամբողջ տափարակում Կուրի եւ Արաքսի ափերով: Զրանցքները որոնց կազմն ու շինուածքը այնքան յար եւ նման էին Միջագետքի-Բաբելաստանի ջրանցքներին, որ կասկած չի կարող մնալ թէ դրանք միաժամանակ են շինուած: Այդպէս էլ Հայկական լեռների լանջերին բացուած, պեղուած եւ կիկլոպեան (Cyclope) շրջաններում շինուած պատերի նման որմեր ու բուրջեր ունեցող ջրանցքները իրենց կազմով վկայում են, որ նրանք էլ միեւնոյն դարում, միեւնոյն վիշապազանց շրջանում միեւնոյն ոգեւորութեան արդիւնքն են կազմում: Ահա այդ ջրանցքների որմերն ու խալիւածները եթէ նորագոյն, այնպիսի ընդարձակ գործեր կը բացուին եւ այնքան անգործ ձեռքեր աշխատանքի կը ձգուեն, այնքան անպատաների հողերը կը վերակենդանանան, որ դրախտի կը վերագործեն աշխարհը:

Յայտնի բան է, Կապսից դէպի Ալէքսանդրապոլ ձգուած ջրանցքը չի կարող բաւականացնել Արեւելեան Շիրակի շուրջ 75 հազար դեքտարին ցանքի հողերին, որոնք եօթուորդարուց ի վեր անջրդի են մնացած եւ Շիրակեցին հնարաւորութիւն ունեցած չէ ջրանցքներով վերանորոգելու եւ մարդավայել ապրելու: Մանաւանդ որ 1060 թ. Ալիասլանի կոտորածից յետոյ Շիրակի դաշտի ինչպէս Արեւելեան, նոյնպէս Արեւմտեան մասը ինն անգամ լիովին կոտորուած, գաղթած եւ դաշտը լերկ թողած է, ապա զանազան վայրերից նորից հաւաքուած ու շէնցրած է, Թաթարները իրենց ոչխարներով այս երկրում տարածուելով, երկրամշակութեամբ երբեք պարապած չեն, ինչպէս Մուղանը, նոյնպէս միւս սարահարթները արօտատեղի են դարձրած եւ անխնամ թողնուած ջրանցքները՝ փձացած, քայքայուած են: Մուղանի դաշտի վրայ ութ դարի ընթացքում 7—8 մետր բարձրութեամբ աւազ ու փտութիւն էր լցուած, որոնց տակից միայն դուրս եկան երկաթ ու ձիգ ջրանցքները: Մեր երկրի ջրանցքները լեռնային մասի որմերը մասամբ տեղն են, իսկ դաշտային մասի որմերը տեղտեղ կործանուած

եւ մեծ մասամբ աւազով եւ հողով ծածկուած են դարերի ընթացքում: Ահա այդ քայքայուած, կործանուած եւ ծակուած ջրանցքները մեծամեծ ծախսերի եւ ջանքերի կարօտ են:

Ասողիկն ասում է, թէ Շիրակում երկրամշակութիւնն այնպէս էր ծաղկած, որ մի դէպ հող բաց, անխնամ չէր մնացած: Երկրագործութիւնը եթէ այդպէս զարգացած չլինէր, Բագրատունիների օրով, 870—1020 թ., հարիւր յիսուն տարուան ընթացքում հնարաւոր չէր լիներ Անի քաղաքի երեք կարգ պարիսպներն ու խրամները շինել, բազմաթիւ ամրոցներ կառուցել, Ախուրեանի եւ Արաքսի վրայ մեծամեծ կամուրջներ կանգնեցնել, ամբողջ Շիրակում եւ շրջականերում հազար փառահեղ եկեղեցիներ կանգնեցնել, ուղիներ հարթել, պալատներ հիմնել, բերդեր ու միջնաբերդեր պարսպել, միանգամայն մաքառել ներքին եւ արտաքին խժոժութիւնների, արշաւանքների եւ աւարառութիւնների դէմ: Եթէ Բագրատունիների օրով ինչպէս Արագածի, նոյնպէս Զառիշատի ջրանցքները չգործէին, նրանք չնպաստէին ոռոգման, դժուար թէ Անին եւ Շիրակը այն բարձրութեան հասնէին, այնպիսի փառաւոր հետքեր թողնէին, որ մեր դարում հիացնէր համայն Եւրոպական գիտական եւ տեխնիքական բանասէրներին: Այն ճոխութիւնը, որ իւր հետքերը թողել է, շատ բնական ցոյց կտայ, որ Անին ու Շիրակի դաշտը — Արեւելեան եւ Արմատեան՝ պիտի ունենար գոնէ երկու միլիոն բնակչութիւն, եթէ ոչ աւելի: Այսօր այդ դաշտը երեք հարիւր հազար մարդ չի կարողանում կերակրել եւ 1880 թ. շարունակ Ռուսաստանից ալիւր պիտի գայ, որ սովամահ չմնայ ժողովուրդը: Կասկած չկայ, որ եթէ վերանորոգուին ջրանցքները եւ ոռոգեն հողը, նա կարող է, եթէ ոչ աւելի, գոնէ մի միլիոն մարդ կերակրել: Անիի արդիւնագործութիւնը (industrie) չէր կարող հասնել այն կատարելագործութեան, ինչ որ տեսնում ենք նրա հետքերից, որոնցից մաս ու բաժին հասած է Եւրոպական միզներին, եթէ նախնական շրջաններում երկրագործութիւնը այն կարեւոր բարձրութեան հասած չլինէր, որ առատապէս կշտացնէր արհեստաւորներին, եւ հնարաւորութիւն չտար արուեստը ծաղկեցնելու:

Գուցէ Հայաստանի նախնական քաղաքակրթութեան շրջանի այսպիսի բարձր եւ ընդարձակ գոյծունելութիւն վերագրելը կասկածելի թուի, բայց եթէ ընթերցողը ուշադրութեամբ զննէ ու քննադատէ այդ նախնական շրջանից

մնացած բեկորները, նա էլ կը հասնի այն եզրակացութիւններին, որոնք ստիպում են հաւատալու, թէ հին հին դարերում էլ երկրի ամենահին բնակիչների միտքն ու ձեռքերը անընդհատ գործել են, անվերջ ծրագրել, ուրուագծել եւ իրականացրել են այդ անձայն յիշատակարանները, որոնք այսօր խօսում եւ մեզ պատմում են, թէ ինչ հսկայական քայլերով աշխատել, զարգացրել եւ երկիրը բեղմնաւորել են իրենց եռանդալի գործերով այդ նախորդները: Արագածի լանջերին այսօր խրոխտաբար կանգնած կիկլոպեան պարիսպները՝ Հոռոմ, Կապիլու, Սոսկերտ, Տեկու եւ ուրիշները՝ այնպիսի տիտանական գործեր են, որ չեն կարող վերագրուել տաճարներ, պալատներ, սրբատաշ քարերով բերդեր, պարիսպներ շինող Ուրարտացիներին, որոնց մէջ քաղաքակրթութիւնը այն աստիճանի զարգացած էր, որ ոսկուց ու փղոսկրից շինուած գահաւորակներ էին գործածում եւ չէնքերը կրաշաղխով եւ աւազով էին ամրացնում: Ոչ միայն հսկայական 2—3 խորանարդ մետր ապառաժներով էին պարսպում քաղաքները, այլ Հոռոմ քաղաքի շրջապատի պարիսպը աւելի քան հինգ կիլոմետր երկարութիւն, երեք մետր բարձրութիւն եւ երկու մետր լծանքով թիւն ունէր: Այս պարիսպի մէջ գործածուած որձաքարերն Բեռլինի բուրժի քարերից փոքր չեն, իսկ ծաւալը եթէ հաշուենք գերազանց վիթխարի է եւ առանց որ եւ է շաղախի այնպէս է իրար վրայ նստեցրած, որ բնական ապառաժի նման անշարժ են մնացել:

Քանի որ լեռնային պեղումների մօտ կառուցած ջրանցքների որմերը<sup>2</sup> եւս նոյն ոճն ու տեսքն ունին եւ կիկլոպեաններից չեն զանազանուում, կասկած չկայ, որ դրանք բոլորն էլ մի եւ նոյն շրջանի արհեստաւորների գործեր են եւ այնքան հսկայական են, որ դարերից ի վեր ժողովուրդը չի կարողացել բացատրել, թէ ինչպէս են բերել ու շարել այդ ապառաժի կտորները, նա նախկին օրերի նման կիկլոպեաններն է վերագրել: Կիկլոպեան շինութիւնները, ինչպէս բերդերը, նոյնպէս ջրանցքները տարածուած են մեր երկրի ամէն մի նահանգում եւ գաւառում, այնպէս որ բոլորն էլ մի շրջանի գործ են եւ կատարուել են մրցակցութեամբ եւ նախանձա-

1 Տես Ազգագրական հանդէս, Թիւ XXV, «Շիրակի կիկլոպեան ամրոցները» եւ արտասպառութիւնը, Թիֆլիս 1912 թ.:

2 Տես Արշ. Միլիթարեան «Արարատի վերելքը 1903», Թիֆլիս, հրատարակ. Արիւի Արարատի վերելքը:

խնդրութեամբ: Ինչ անք որ ունին Շիրակի, Կարսի եւ Բասէնի կիկլոպեան ամրոցները, նոյն ձեւն ու տեսքն ունին Վանի, Վարաքի, Մուշի, Մանազկերտի բոլոր կիկլոպեան բերդերը. թէ Արաքսի եւ Կուրի մէջ եւ թէ Արաքսից ցած, Վանի եւ Ուրմիայի լճերի շուրջը համանման չէք են ունեցել նախնական բերդերը. այսպէս Գոտիումի Գուտի իշխանը կարողացել է իւր երկիրը պաշտպանել եւ Շիպարում տաճար կանգնեցնել Բ. Ծ. 3500 տարի էլ առաջ: Հետեւաբար, ամբողջ Նայիրի երկիրը սկսեալ Սոււր-Ակ-կատների շրջանից յարաբերութիւն պիտի ունենար Մեջագետքի հետ, որ սրանք իրենց Եփրատ-Տիգրիս գետի Աստուածների ծնունդ ու ծագումը այդ երկրին էին վերագրում եւ այդ երկիրը Աստուածների բնակարան համարում: Ինչպէս Տայքի Կող դաւառի Կամըրջակի անտառից կտրուած շոճիները տաս-տասնուհինգը իրար կապում, տօնով տանում են Արտահանի, Խրթի, Ախալցխայի, Բորժոմի, Գորիի, Թիֆլիզի, Գանձակի գաւառներից մինչեւ Մուղան եւ Բագու, նոյն ձեւով են տարել Բասէնի եւ Գոււմլի լեռներից կտրուած շոճին Սեւ-ջրի վրայով, Կարինի դաշտով, Էրիզայի շրջանով, Եփրատի ընթացքով մինչեւ Երեզու, Ուր եւ Ուրեք քաղաքները, որոնց մասին յիշատակութիւններ է նկատուում այդ քաղաքների աւերակներից դուրս եկած արձանագրութիւնների մէջ: Լաստերից առաջ տօնակերով են հաղորդակցել Նայիրցիները Սոււմեր-Ակկատների հետ եւ իրար հետ փոխանակել իրար չունեցածները: Անշուշտ գիւտերից եւ արհեստներից մեծ աշխարհակալներ ոչ եկել են եւ ոչ էլ գալու են այս երկրիս վրայ: Միջագետքի մարերի յուզած ալիքները եւ մրրիկները չէին կարող չթափանցել Նայիրի երկիրը: Երկրագործութիւնն ու պղնձագործութիւնը միաժամանակ կ'արշաւէին Նայիրի գաւառները: Ինչպէս Տիգրիսի, նոյնպէս Եփրատի Նայիրի երկրում ափերի բարձունքներում գործադրուած եւ մշակուած հազարաւոր պղնձի հանքերը ցոյց են տալիս, որ նրանք գործել են Սոււմեր-Ակկատների շրջանում. նոյնպէս նրանցից ետ չեն մնալ Արաքսի, Կուրի եւ Ճորոխի ափերում պեղուած ու մշակուած պղնձի հազարաւոր հանքերը, որոնք ամէն քայլափոխի իրենց գոյութեամբ եւ հնութեամբ հանքաբանների ուշքն են գրաւում եւ զարմանքը գրգռում:

Նոյն իսկ Շիրակի քաղաքի այս օրուան կենդրոնատեղին՝ Կապու գիւղը իր հետաքրքրա-

կան անունով մեզ մօքով տանում է հազար տարի Բ. Ծ. առաջ Ասորեստանցիների եւ Ուրարտացիների պայքարի շրջանը, որոնք արշաւելուց Նայիրի երկիրը՝ կործանում էին քաղաքները եւ կողոպտում էին այլեւայլ առարկաները, շարքից գլխաւորաբար պղնձեղէն շինուածները: Այս կողոպուտն ապացուցանում է, որ մեր բնաշխարհը արտադրում է մեծ քանակով պղնձ, որից Միջագետքը՝ Նինուէն եւ իր շրջանը զուրկ էին որ այդպիսի անյագ կերպով պղնձեղէն եւ անագապղնձ էին տանում: Ասորական այն արձանագրութիւնները, որոնք իրենց տարած աւարտ են նկարագրում, մեզ ասում են թէ Նայիրի երկիրը նրանցից դարեր եւ անչափ դարեր առաջ ունեցել է մեծ քաղաքակրթութիւն եւ բարուրուած կեանք, որ արտադրել է այն նիւթերը, որոնք յափշտակում են արշաւող զօրականները: Այս կենդանի վկայարանների պատմութիւնները մասին չենք կարող կասկածել, քանի որ դրանք չեն գրուած Նայիրի երկրի փառքը ներբողելու այլ կազմակերպուած են եւ դասաւորուած Ասորական քաղաքների եւ տաճարների մէջ իրենց զէնքի յաղթանակները տարփողելու, յափշտակութիւնները եւ բարբարոս արիւնահեղութիւնները յաւերժացնելու նպատակով: Բայց դրանք փոխանակ անմահացնելու Ասորեստանցիների «քաղաքործութիւնները» մեզ աւանդում են թէ ինչ վեհութեան էր հասած պաշտպանողական պայքար մղող Ուրարտացիների բնակավայրը իր բարգաւաճ եւ ճիս կարողութեամբ, բաղմամբ քաղաքներով եւ աւաններով, որոնք բոլորն էլ պարսպուած եւ ամրացուած են եղել:

Այս արձանագրութիւնների մէջ չորս տեղ յիշատակուում է Կապու անունը, «Բիւր-Կապու» որ ոչ թէ Շիրակի Կապսին է մատնանշում, այլ Ուրմիայի լճի ափի Կապսին: Անշուշտ այս գիւղի Կապս անունը նոր չէ, ոչ Ռուսներն են մկրտել, ոչ էլ Թաթարները, այլ նա մեզ հասել է ժառանգաբար նախնական շրջաններից: Կապս անունը պահպանած են մինչեւ օրս Ճորոխի, Կուրի, Արաքսի, Եփրատի ափերում եւ Կիլիկիայում գետափնեայ ձորերին կից այն տեղերը, ուր որ եւ է մի երկրորդ վտակ կամ խրամատ կտրում է գետի ափը եւ կազմում է մի եռանկիւնի ցամաք Կապս, Կապ, Կապան, Կապիճ, Կապիչ, Կապներուն, Կապնեսկերտ, Կապան-Տորոսի, Կապանքի դուռը, Կապանքի տակը եւն եւն: Թէեւ Պարսերը, Թաթարները եւ Ռուսները շատ տեղերի անունները փոփոխած եւ ծրմուած են, բայց եւ այնպէս հին հին դարերի կուլտուրական զար-

գացման շրջանից մնացած անուններից շատերը դեռ եւս յամառութեամբ պահպանում են իրենց գոյութիւնը: Միայն Շիրակում հարկերից աւելի հին անուններ կարելի է հաշուել, որոնք աւանդաբար մնացել են մինչեւ օրս, իսկ ծըրմուռած եւ թաթար լեզուին յարմարեցրած անունները եթէ հաշուենք, նրանք տասն անգամ կ'աւելացնեն հին անունների հետքերը: Այսօրուան Գիրաքլար գիւղը որն եղել է մի ժամանակ եղապաշտութեան կայան, Ուրարտական շրջանում ունեցել է «Գիրեգլիւրկասատու» անուն, որ ժողովրդի բերանում կրճատուել է եւ թաթարական Գիրակլարի է փոխուել:

Շիրակի այլեւայլ կողմերում Նայիրի եւ աւելի վաղ ժամանակներից մնացել են ջրապատական ուխտատեղիներ, իրենց բովանդակալի անուններով, որոնք մեզ յիշեցնում են նախապատմական անցեալի զանազան անցքերը եւ սովորութիւնները. այսպէս «Ագ-Բաբ» լեռան ուխտատեղին «Արփագեօն» Արփալի գլխին կանգնած հսկում է լճին եւ նրա շրջապատի ճահիճների եւ անթիւ աղբերակների, որոնցից առաջանում է Արփաջայը. այդպիսի մի հռչակաւոր ուխտատեղի է Բագու լիճը, Բագուի ջրանցքի հետ Արագածի բարձունքում, որը նոյն լեռան հարաւային ամենաբարձր լանջին է կանգնած եւ ընդունում է շրջապատող բոլոր աղբիւրներն եւ ձիւնի հալած ջրերն իր մէջ, եւ մի ժամանակ տանում էր ոռոգելու Սարգարաբատի դաշտը, որի ջրանցքը քանդուած է տեղ տեղ, ջրերը քարան հեղեղներին իջնում են եւ Արաքսի հետ ծովն են լցնում, իսկ դաշտը կարմրել է իր ապառաժներով արաբական արեւավառ անապատների նման: Անշուշտ Բագու ուխտատեղիի, Բագու լճի եւ ջրանցքի գոյութիւնը շատերի համար նորութիւն է, մանաւանդ Բագու համանունը, որ յատուկ է նաւթային աշխարհի հուր ու բոց, գազ ու նաւթ ժայթքող քաղաքին, որտեղից ուր է ցատկել այս անունը: Սուրախանիում եւ Բիբի-էէյրադում մշտնջենական գազեր, նաւթեր եւ սպիտակ քար-իւղ բլրող քաղաքին յատուկ այս անունը շատ ընդհանրացած է Նայիրի երկրին, որին կցուած է Բագուն իր Մուղանի դաշտով եւ Շիրակն էլ շատ ունի իր Բագունները: Անիի արեւմտեան կողմը կանգնած Ալաշա սարի բարձունքում գտնուում է Բագնալը, Անիից հարաւ, Ախուրեանից ոչ շատ հեռու կանգնած է Կամարականների Ոստանը՝ Բագրանը իր սրբազան արեւապաշտական մեհանով, որն յետոյ քրիս-

տոնէական տաճար էր փոխարկուել եւ մրցել էր Անիի հետ: Բագու, Բագրան, Բագարան, Բագնայր, Բագավան, Բագուն, Բագնոց, Բագրեւանդ, Բագէնք, Բագունք, Բագրատ, բագինք բագ, բագին, բագի, բագնապետ եւ բագնորդ անունները ցոյց են տալիս, որ ոչ միայն գազ ու նաւթ արտադրող տեղերն են այդ անունը կրում, այլ աղբերակները, ջուր բլրող տեղերն էլ այդ անունն ունին եւ «բլիման» բառի հետ համանիշ են: Երկրին ոռոգման նպատակով կէտերը, որտեղերից առատ ջրեր են ստացուում, երկրպագելի բագիններ-սեղաններ են, ինչպէս հուր ժայթքողները: Ինչպէս մի ժամանակ Գառնիի բարձունքի լճակները, որտեղից դուրս էր գալիս Գառնի ջրանցքը եւ ոռոգում էր Արարատեան դաշտը եւ Գառնիի լճակների ուխտատեղիները, որձաքարից, բալաւից յղկուած վիշապների արձանները պաշտուում էին ուխտաւորներից, այդպէս էլ Արագածի Բագու լճակը եղել է ուխտատեղի եւ երկրպագելի ժողովրդի համար: Եթէ այս լճակի յատակն ու ափերը ուսումնասիրուի, շատ հաւանական է, որ այստեղ էլ գտնուին որձաքարից շինուած վիշապաձեւ, վիշապական արձաններ յար եւ նման Գառնիի լճակների մօտ գտնուած 40—50 վիշապական արձաններին, որոնք ոչ միայն յղկուած են, այլ իրենց վրայ ունին հարթաքանդակ եւ բարձրաքանդակ օձի, մողեսի, եղի եւ ուրիշ վիշապանման բնական եւ երեւակայական նկարներ: Այսօր վիշապաղանց լճակների — Գառնիի բարձունքի վիշապական արձանները անձայն կերպով մեզ աւելի ընդարձակ տեղեկութիւններ են տալիս վիշապաղանց մասին, քան թէ Փաւստոս Բիւզանդացին, Ղազար Փարպեցին եւ Մովսէս Խորենացին, որոնք ոչինչ չեն պարզում մեզ վիշապաղանց շրջանի մասին<sup>1</sup>:

Բագու լճակից տարած ջրանցքը եւ ճանապարհին շինուած աւազաններն այնպէս են լցուած, խոպանացած, այնպէս են քարուքանդ եղած, որ անցորդը կամ այցելուն հազիւ թէ նշմարեն, եթէ յատկապէս չորոնեն: Բայց այդ լճակը եւ ջրանցքը միակը չէ Արագածի լանջին: Հնումը Արագածի հիւսիս արեւմտեան լանջի Մանթաշի ձորը ունեցել է որմեր, որոնք կազմել են Մանթաշի եօթը ամբարտակների շարքը: Այդ որմերը այնպէս են դասաւորուած, որ մինչեւ ամբարն վերջը պահպանել են իրենց ջրերը եւ ոռոգել Շիրակի արեւելեան դաշտի 60—70 հա-

<sup>1</sup> Տես իմ «Վիշապամայրը» տպուած Ալեքսանդրապոլ 1912 թ.:

ղար դեսիատին հանգերը: Այս ձորի ամբարտակները նման են Եգիպտոսի վերին բարձունքներում փորուած ամբարտակներին, որ տեղերում գարնան հեղեղների, հալուած ձիւների ջրերն են ամբարուում եւ չեն թողնում, որ իջնեն լցուեն գետերը, այլ պահում են, որպէս զի անընդհատ ոռոգեն երկիրը: Եթէ այս ձորի որմերը շինուին, աւազան-ամբարտակները կազմակերպուին, Արագածի լանջի հիւսիս եւ արեւելեան բոլոր գիւղերը կ'որոգուին եւ կ'ապահովին երկրամշակին:

Արագածը իր ջրառատութեամբ ետ չի մնում Զորաբաշի շղթայից: Արագածի հիւսիս արեւելեան լանջից իջնում էր Ապարանի ձորը եւ այնտեղից առաջ գնալով հասնում էր մինչեւ Աշտարակ-Օշական կազանֆարի լճակների եւ ջրանցքի ջրերը: Կազանֆարն էլ ուխտատեղի է, նրա ջրերն էլ երկրպագուներ շատ են ունեցել հին հին դարերում: Կազանֆար-Կազանչի բառերը ակամայ հետազոտողի միտքն են հետաքրքրում եւ բորբոքում որոնելու, թէ ինչ է ծածկուած այդ բառի տակ: Ոչ միայն Արագածի լանջերում երկու գիւղ կայ այդ անունով, այլ մի գիւղ էլ կայ Ագ-բարի շրջանում, Արփաշայի ափին, Չըլդը լճակի մօտ, Օլթիի կողմերը, մանաւանդ թորթում՝ կազան լեռը, որին կցուած է կազան-բաշի լեռնաշղթան իր «Զիարէթ-լճով» եւ Գումլու-սարերը: Կազանի ձորը եւ կազան եւ կազան-բաշին այն ջրառատ լեռնաշղթան է, որտեղից սկիզբն են առնում Եփրատը՝ Սեւ-ջուր վտակը, Ճորոխը, Թորթումը, Օլթիի վտակը եւ Բազմաթիւ վտակներ, որոնց բոլորին էլ ջուր է հասնում, ինչպէս Բին-Գէօլից սկիզբն է առնում, Արաքսը, Արածանին եւ ուրիշ բազմաթիւ վտակներ: Կազան լեռների, Գումլու շղթայի անտառներից իջնում է այն մեծ կարասուն (Մահան ջուր), որ Եփրատի ամենաերկար ծայրն ու կուռքն են կազմում: Կազան<sup>1</sup> բառը թուրքերէն պղնձի ու կաթսայի նշանակութիւն ունի, բայց այստեղ բոլորովին տարբեր մտքով է առաջ գալիս, որը լուրջ քննութեան կարօտ է: Ամէնից հետաքրքրականը աղբերակների, աղբիւրների եւ լճակների պաշտամունքն է, ջրի, ջրապաշտութեան, վիշապաղանց պաշտամունքն է, որ Նայիրի երկրի բոլոր կողմերը տարածուած է: Բայց իսկապէս Գումլու լեռներից բղխած աղբիւրը, որ 8567 բարձրութիւն ունի,

այնպիսի անմահական ջուր ունի եւ այնքան առատութեամբ է հոսում, որ կարասու գետ սկիզբն է կազմում, մինչեւ կարինի դաշտ մտնելը Չիթաուղ գիւղի մօտ սրնթաց սահուն է, որ տեղ նրա ծովից բարձրութիւնը միայն 6600 է, որ իջնում է 25 կիլոմետր տարածութեան ընթացքում մօտաւորապէս 2000ի: Այս 25 կիլոմետր ճանապարհին աջ կողմի ու թը մեծ եւ ձախ կողմից 4 վտակներ է ընդունում: այնպէս որ կըլըլ-Քիլիսէ գիւղի մօտ, գետ կարնի դաշտը չմտած, նա արդէն մեծ գետ է սրնթաց ճեղքում է Գիւրջի-բողաղը, կարս Գէօրէկը առաջ է գնում դէպի Ելիջէ եւ Մամախթուն:

Ինչպէս Շիրակը, Նոյնպէս Գառնին, Շարուրի դաշտը, Սարգարաբաղը կալիք ունին մեծամեծ ջրանցքների, նախկին ջրանցքների նման, իսկ այս պահանջը միջաւանջի նման նստել են վարչութեան կոկորդին, բարարութիւն են ուղում, անշուշտ հերթով այս բոլորը պիտի իրականացնէ Հայաստանի խորհրդային կառավարութիւնը: Բայց պահանջն այնքան մեծ է, որ անհրաժեշտ է անհուն համբերութեամբ եւ անսահման եռանդով հետզհետէ բարեկարգել:

Այս պատմական ջրանցքները, Նոյնպէս Զարիշատի, Մասիսի, Բարդոզի, Ներքովդի, Վարագի լեռներից եւ նրանց լճակներից իջեցրուած ջրանցքները անյիշելի ժամանակներից են շինուած, այն դարերում, երբ երկիրը ինքնակալներ եւ միահեծաններ չուներ, մարդիկ քուրմերի առաջնորդութեամբ համայնական ուժով մաքառում էին ժլատ կամ ոչ ժամանակին անձրեւ տուող բնութեան դէմ եւ տքնում այնպիսի ընդարձակ ջրանցքներ հիմնել, որ անխափան ոռոգուի երկիրը եւ իրենք ու իրենց ժառանգները անպաշար չմնան:

Թէեւ Ուրարտուի թագաւորները պարծենում են, թէ իրենք են շինել Վարագայ լեռան ջրանցքը եւ Տոսպի այգեստաններին առատ ջուր մատակարարել, բայց անհաւանական է թուում այդ պարծենկոտութիւնը, քանի որ Բ. Մ. 750 տարի առաջ կրաշաղախի գործածութիւնը տարածուած էր Նայիրի երկրում, որմերը շինում էին տաշուած քարերով, այն ինչ Վարագի ջրանցքի որմերը Նարեկայ վանքի շուրջն եղած կիկլոպեան որմեր ունին, առանց շաղախի եւ շինուած են իրենց ընկերակիցների հետ միեւնոյն դարում: Նոյն իսկ Տոսպի թագաւորները Վանի բերդի որմերը շինել են տուել կոկուած քարե-

<sup>1</sup> Կազանֆար նշանակում է առիւծ, լեւ, ժողովուրդը մինչեւ այսօր Կազան բառը առիւծ իմաստով գործածում է: Արդեօք այս մտքով է գործածուած:

րով, կրի շաղախով, մանաւանդ որ այդ դարում մեծ մեծ ապառաժի անտաշ կտորներով որմեր չէին կարող շարել: Շատ հաւանական է, որ Ասորեստանի ինքնակալները տեղ տեղ կործանել, քանդել էին Տասպի ջրանցքը՝ որ պաշարած քաղաքին կարողանան տիրել, բայց չյաջողեցան եւ Ուրարտացիները վերանորոգեցին այդ աւերուածները եւ արձանագրութեան մէջ մացրին թէ իրենք են շինել:

Այսպէս էլ Ժ. դարում Սենեքերիմ Արծրունին չէր կարող Մասիսի կիկլոպեան ջրանցքը շինել, 10.000 բարձրութիւնից պեղել, կիկլոպեան որմեր շինել եւ ջուրն իջեցնել Մասիսի ստորոտը ոռոգելու: Նրա թողած արձանագրութիւնը ցոյց է տալիս, թէ Ջրանցքը գործել է մինչեւ Սենեքերիմի օրերը, որը վերանորոգել է կործանուած մասերը:

Վերջացնելով մեր խօսքը Շիրակի Ջրանցքի մասին, չենք կարող չսիշատակել, որ ինչպէս կազան լեռը, կազան եւ Դոււմլու լեռնաշղթայով համարուում են Եփրատի, Ճորոխի ակունքը, նոյնպէս Բիւրաքնեան լեռները Արաքսի եւ Արածնու (Մուրադ չայի) ակունքը. Ախուրեանի ակունքը նախնական ժամանակներին նուիրուած էին ջրերի Անու Աստուածուհուն, նոյնպէս Նայիրի երկրի բոլոր վտակների սկզբնական ակունքը ամէն տեղ պաշտամունքի առարկայ են դարձել ամէն տեղ էլ նոյն Անու Աստուածուհուն, որը Վիշապազանց շրջանում Արեւի եւ Երկրամօր հետ երրորդութիւն էին կազմած հեթանոս ժողովուրդի մտապատկերներում, եւ դրանց աւանդութիւնները մնացել է ժողովրդական առասպելների մէջ: Անու Աստուածուհուն էին նուիրուած մեր երկրում ինչպէս Անի քաղաքը Ախուրեանի ափին, այնպէս էլ Անի բերդը Եփրատի Ափին, Եկեղեց-Երիզայի գաւառում, Անի ամրոցը Ճորոխի ափին, Կիսկիմի մօտ, Անի քաղաքը Կուր եւ Արաքսի խառնուրդից յետոյ Վրկանայ ծովափին մօտ, Մուղանի գաւառում, Անի աւանը Ուրմիայի լճի մօտ, Անի վտակի ափին. Անի աւերակների մօտ, Արճէշից ոչ շատ հեռու Վանի լճի մօտ, որոնք ցոյց են տալիս, որ ջրապաշտութիւնը ամենավաղ ժամանակներից ծնունդ է առել, զարգացել ու տարածուել է ինչպէս Ստորին Միջագետքում, Սանասարի գաւառում, նոյնպէս ընդարձակ պաշտամունքի առարկայ է դարձել Նայիրի երկրում Եւքսեան-Պոնտոսի ափերից մինչեւ Վրկանայ ծովի ափերը. Կովկասի լեռներից մինչեւ Պարսից ծոց:

Ջրի աստուածութիւնը ձկնի եւ աւելի շատ վիշապ օձի կերպարանքով էին նկարում, որի արձանները Գառնիի բարձունքով կենդանի պատմիչներ են, ապրում էր սառնորակ եւ վճիտ ջրերի մէջ, ուր աճում են կարմրախայտ ձկները, որտեղից սկիզբն էին առնում օձապտոյտ առուակներն ու վտակները: Վիշապների արձանները ուղղահայեաց կանգնեցնում էին լճակների ափին, նոյն իսկ ջրերի մէջ, նմանեցնելով վիշապին (Թաթարին), երբ ամպերը սիւնի ձեւով լճակներից եւ ծովերից ջուր են վերցնում, որոնց մինչեւ այսօր հայ ժողովուրդը ասում է, վիշապն իջաւ, Ուիշապն ոլորեց ու բարձրացրեց ամպերը: Ինչպէս Անու Աստուածուհին իր առասպելներով ոգեւորել էր հին հին դարերում Նայիրի երկրի տիտաններին, որոնք հսկայական բազուկներով պեղել ու որմել էին կիկլոպեան ջրանցքները, այդպիսի կորովով սկսել է Հայաստանի խորհրդավորութիւնը ամէնից առաջ բարենորոգել մեր երկրամշակութիւնը, ջրանցքների վերանորոգութեամբ եւ վերաշինութեամբ: Անկասկած երբ ժողովուրդը լաւ վարձատրուած երկրամշակութեամբ իր ընտանիքի պարէնը վաստէ, ամբարները լցնէ, առանց կասկածի ինքն էլ կը սկսի լաւ ու յարմար բնակարաններ շինել, բաղանիսներ հիմնել, թատրոններ ու կրկեսներ կառուցել, երկիրը՝ իր բնակավայրը զարգարել այգեստաններով, ծառաստաններով: Մենք հաւատում ենք, որ ջրարբի հանդ ու հանդաստանով ժողովուրդը՝ աշխատաւոր երկրամշակն ու բանուորը պիտի իրենց ծննդավայրի խոպան եւ անապատ դաշտերն ու հովիտները դրախտի վերածեն եւ այնպիսի կեանք ստեղծեն, որ վշտակոծ ժողովուրդը մոռացութեան կարողանայ տալ տխուր անցեալը:

15 Մեյսո. 1923,  
Ալեքսանդրապոլ:

ԱՅՐԳԵՏ

